

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ ՅՕՖԵԼԵԱՆԸ

Կ Ո Ձ

Այսօր դրւում է հասարակութեան առաջ նրա կուտուրական կարևոր հիմնարկութիւններից մէկի—Երևանի Թեմական դպրանոցի եօթնասունհինգամեայ յօրելեանի խնդիրը:

Եօթնասունհինգ տարի հայ ժողովրդի ծոցում լուռ ու մունջ գործելով այս դպրոցը, հայ ժողովրդի առաջ դնում է մի պատմութիւն, որն ինչքան սրտաճմլիկ՝ նոյնքան և հերոսական է: Այդ պատմութեան իւրաքանչիւր էջը շաղախուած է յուսահատ ու հերոսական ճիգերով, որ թափել է այս հիմնարկութիւնն իր գոյութիւնը պահպանելու ու իրեն վերապահուած մեծ դերը կատարելու համար:

Այս հիմնարկութիւնն իր սկզբով, շարունակութեամբ ու տուած արդիւնքներով նման է մի համեստ առուակի, որ ժայռերի և կիրճերի դէմ պայքարելով՝ հեազհետէ ուռչում, մեծանում ու դառնում է մի հսկայական գետ, ոռոգելու արևակէզ դաշտերը, դալարաւետ այգիներ դարձնելու անապատները:

Յետ նայելով դէպի այդ անցած ուղին և ուշադրութեան առնելով նրա կատարած վերանորոգչական դերը մեր ազգային կեանքի ասպարիզում, զարմանքով և հիացմունքով լցւում է մարդ, տեսնելով թէ ինչքան այս դպրոցն այնքան համեստ իր սկզբնաւորութեամբ, կարողացել է իր սեփական ջանքերով ոչ միայն պահել և պահպանել իր գոյութիւնն, այլև հետզհետէ յառաջադիմելով դառնալ մի կարևոր հիմնարկութիւն մեր կեանքի համար:

1837 թուին Երևանի Ս. Սարգիս եկեղեցու գաւթում բացւում է մեր այժմեան ծխական նորաբաց դպրոցների նման մի խղճուկ դպրոց, որ կրում էր «Երևանի Հայոց սեմինարիա» անունը. և ինչ էր այդ «սեմինարիան», երկու խարխուլ սենեակից բաղկացած մի շէնք, որ տարիների ընթացքում իր յարկի տակ հազիւ կարողանում էր ժողովել միայն 2—3 ուսուցիչ և մի երկու տասնեակ աշակերտներ: Դպրոցի աղբիւրներն աննշան և պատահական էին, տարեկան բիւջէն 400—800 ռուբլուց չէր անցնում, և այսպիսի խղճուկ դրութեամբ նա սկսել է առաջ տանել հայ ժողովրդի, հայ մտքի լուսաւորութեան վեհ գործը:

Բայց ահա 1860 թուից, երբ երջանկայիշատակ Տ. Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոսի սրբատառ կոնդակով ժողովուրդն հրաւիրուեմ է մասնակցելու դպրոցական գործին և ստեղծուեմ են հոգաբարձական մարմիններ, այդ օրից սկսուեմ է դպրանոցի եկրորդ հերոսական, մեղուաջան աշխատանքի արդիւնաւոր շրջանը: Ճիշտ է, դպրանոցը նորից շարունակուեմ է անտեսական տագնապալից օրեր անցկացնել և թէև դանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջ է գնուեմ, տարէցտարի մեծացնուեմ է բիւջէն, ընդարձակուեմ է իր պատերը, հարեւրաւոր սաներ է դաստիարակուեմ և ուղարկուեմ ամենախուլ գաւառները և մըթապատ գիւղերը լուսաւորելու գիտութեան լուսով: Եւ այսօր չկան Երեւանի ամբողջ թեմուեմ մի վայր, մի գիւղ թէ քաղաք, ուր հասած չլինի Երեւանի Թեմական դպրոցից լոյսի գէթ մի փոքրիկ ճառագայթ:

Երեւանի Թեմական դպրոցին վերապահուեմ է բացառիկ դեր մեր կուլտուրական ասպարիզուեմ: Գտնուել Երեւանեան նահանգի կենտրոնուեմ, Արարատեան դաշտի սրտուեմ, շրջապատուեմ հարեւր-հազարաւոր աշխատաւոր հայութեամբ, սա է միակ կանթիղը, որի պլալացող ճառագայթները պիտի տարածուեն հայ շինականի ամենախուլ խրմիթները լուսաւորելու: Շիրակից սկսած մինչև Գեղամայ ափերը, Արագածի լանջերից մինչև Մասիսի փեշերը՝ հողին կպած ու հողը իր արիւնքրտինքով շաղախող հայ գիւղացին, լուսաւորութեան այս տաճարից է ստանալու գլխաւոր ճառագայթները:

Երեւանի Թեմական դպրանոցը Արարատեան նահանգի սիրտն է: Արարատեան նահանգը՝ Ռուսահայութեան կենտրոնը: Հայութեան ազգային կուլտուրան այն ժամանակ կենսունակ և ապահով կլինի, երբ ապահովուեմ և լուսաւոր է նրա կենտրոնը, կենտրոնը այն ժամանակ կենսունակ կը լինի, երբ նրա սիրտն առողջ է ու զօրեղ բարախումբներով: Ուրեմն Երեւանի Թեմական դպրանոցի ապահովութիւնը հայ ինքնուրոյն կուլտուրայի ապահովութեան մեծագոյն ազդակն է:

Եւ այդ կուլտուրական ազդակը, որի դերը անցեալուեմ իբրեւ մի պատմական փաստ, այսօր միւր աչքի առաջ է, իսկ ապագայուեմ գրեթէ ամենքիս համար հասկանալի, չնայած իր 75 տարուայ պատկառելի անցեալին, զուրկ է այսօր անհրաժեշտ նիւթական միջոցներից: Թողնել որ այդ պատկառելի ծեփով հիմնարկութիւնը շարունակէ իր գոյութիւնն այնպէս, ինչպէս այդ եղել է մինչև օրս՝ անհնարին է այլևս: Նա պէտք է ապահովուի:

Մի Թեմական դպրանոց, որ հոգուեմ է 800,000 հայ ազգաբնակչութեան լուսաւորութեան կարիքները, այժմեան աւերակների փոխարէն պէտք է ունենայ մի ընդարձակ հոյակապ շէնք՝ յար-

մարեցրած ժամանակակից գիտութեան բոլոր պահանջներին և այդ հոյակապ շէնքի հետ միասին պէտք է հոգացուի դպրանոցի և այլ բազմապիսի կարիքները:

Երևանի Թեմական դպրանոցի ապահովութեան խնդիրը հասարակապէս ընդհանուր հայութեան պարտականութիւնն է: Ամէն մի հայ, հարուստ թէ աղքատ, իր կարողութեան չափ իր լուսման պիտի տայ Թեմական դպրանոցին:

Ահա մի փառաւոր անմահութեան գործ հայ ունեւորի համար. թող ասպարէզ գան այդ ունեւորները և մի անմեռ կոթող կանգնեցնեն Հրազդանի ափերին: Ահա մի առիթ՝ ցոյց տալու, որ հայ գիւղացու, վաճառականի և արհեստաւորի մէջ մեռած չէ ուսման և լուսաւորութեան փափագը, թող ասպարէզ գան իրենց կռակներով ու հազարներով դպրանոցի ապահովութեան խնդիրը գլուխ բերելու: Թող ասպարէզ գան խուլ անկիւններում և յետին գիւղերում լուսաւորութեան կանթիլը պլպլացնող Թեմականի սաները, թող ասպարէզ նետուեն երիտասարդական թափով սրբելու իրենց մօր արցունքները:

Յորեկեանական յանձնաժողովը իր վրայ վերցնելով Թեմական դպրոցի ապահովութեան քաղցր և ծանր լուծը՝ լիայոյս է, որ հայ հասարակութիւնը սրտադին արձագանք կտայ այդ կոչին և իր բոլոր խաւերով ասպարէզ կ'ենտուի հայկական կենտրոնում, հայ սրտի մէջ ապրող Թեմական դպրանոցի համար մի նոր ու փառաւոր ապագայ ստեղծելու առատ նուիրատւութեամբ:

Նախագահ յօբելեանական յանձնաժողովի

ԽՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԳԵԳԵԱՆ

Յօբելեանական յանձնաժողովի անդամներ՝

Աֆրիկեան Առաքիլ, Աֆրիկեան Տիգրան, Ամիրեան տիկին Վարդուհի, Ամիրեան Գէորգ, Ահարոնեան Գեղէոն, Աստարատցեան Թէոս, Բարայեան Թոմաս, Եղիազարեան Վասիլ, Զուբեան Դաւիթ, Խաչատրեան Սմբատ, Կանդուրաբեան Պօղոս, Հասան-Զաւալեան օրիորդ Էլէնօրա, Մալխասեան Արամ, Մանուչարեան Յարութիւն, Մելիքեան Արմենակ, Մելիքեան Յովհաննէս, Միրզոյեան տիկին Մարիամ, Միրզոյեան Վասիլ, Մուսինեան Մկրտիչ, Յարութիւնեան Խաչատուր, Յովհաննիսեան Յովհաննէս, Նաւասարդեան օրիորդ Աննա, Զիլինկարեան Արշակ, Տէր-Աւետիքեան երւանդ, Տէր-Գրիգորեան Արամ, Տէր-Պաշատրեան զրիգոր, Տէր-Մարտիրոսեան Սիրեկան, Տէր-Միքայէլեան Յովհաննէս, Տէր-Յակոբեան Գրիգոր, Օհանեան Յովհաննէս:

Քարտուղար՝ Միք. Տէր-Մանուկեան